ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«05» փետրվարի 2026թ. N 7-Լ

Ե Ր Ե Վ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի N 860-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի զինծառայողների վարքագծի կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալներին, կենտրոնական մարմինների, Երևանի քաղաքային, մարզային վարչությունների պետերին, վերջիններիս հանձնարարությամբ՝ ենթակա անձնակազմին, ինչպես նաև սահմանապահ զորքերի ամբողջ անձնակազմին:

ՀՀ ազգային անվտանգության
ծառայության տնօրեն **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԱԱԾ տնօրենի
2026թ. փետրվարի 5-ի
N 7-Լ հրամանի

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի (այսուհետ՝ Սահմանապահ զորքեր) սպայական և ավագ ենթասպայական կազմերի, ինչպես նաև շարքային ու կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների (այսուհետ՝ Զինծառայող) վարքագծի կանոններով (այսուհետ՝ Վարքագծի կանոններ) սահմանվում են Զինծառայողների մասնագիտական էթիկայի, ծառայողական կարգապահության, հասարակական ու միջանձնային փոխհարաբերությունների ընդհանուր պահանջները, որոնք ուղղված են Զինծառայողի բարեվարք գործելակերպն ապահովելուն՝ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում և դրանից դուրս:

2. Վարքագծի կանոնները հիմնված են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի 2025 թվականի մայիսի 19-ի N 26-Լ հրամանով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների ծառայողների վարքագծի կանոնների վրա և չեն սահմանափակում դրանց կիրառումը Սահմանապահ զորքերի Զինծառայողների նկատմամբ:

3. Զինվորական և կատարողական կարգապահության ամրապնդման նպատակով Սահմանապահ զորքերի Զինծառայողների վարքագծի կանոններ կարող են սահմանվել նաև այլ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերով:

4. Զինծառայողն իր պարտականությունների կատարման ընթացքում և ծառայությունից դուրս պարտավոր է հետևել Վարքագծի կանոններին: Այն Վարքագծի կանոնները, որոնցով ուղղակիորեն նախատեսված է Զինծառայողի պարտականությունը հետևել դրանց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում, կամ որոնք ուղղակիորեն բխում են ծառայողական պարտականություններից, չեն տարածվում Զինծառայողի՝ ծառայությունից դուրս հարաբերությունների վրա:

5. Վարքագծի կանոնները չեն տարածվում օպերատիվ–հետախուզական գործունեության ընթացքում տեղի ունեցող հարաբերությունների վրա, եթե Զինծառայողի կողմից այդ կանոններին հետևելը կարող է խոչընդոտել օպերատիվ–հետախուզական գործունեության մեթոդների և միջոցների կիրառմանը:

6. Վարքագծի կանոններով սահմանված վարքագծի նորմերին չհետևելու համար Զինծառայողը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

2. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

7. Զինծառայողը պարտավոր է իր պարտականությունների կատարման ընթացքում առաջնորդվել օրինականության, իրավունքի և հանրային շահի գերակայության սկզբունքներով, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8. Զինծառայողն իր պարտականություններն իրականացնելիս պարտավոր է չառաջնորդվել ենթադրություններով, մասնավոր նախասիրություններով, հույզերով, վախերով, անձնական վերաբերմունքով կամ այլ կողմնակի ներազդեցությամբ, հիմնվել բացառապես վերաբերելի փաստերի և հստակ չափանիշների վրա, առաջնորդվելով դրանց օբյեկտիվ վերլուծության արդյունքներով կայացված որոշումներով:

9. Զինծառայողը պարտավոր է առավելագույն ջանասիրությամբ ծառայել հանրությանը, հանրային շահին ու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը, ի պաշտոնե վերապահված լիազորությունների, կարողությունների և իրավասության շրջանակներում պարտականությունները կատարել նվիրվածությամբ և առավելագույն արդյունավետությամբ՝ ցուցաբերելով պատասխանատվություն իր վարքագծի համար:

10. Զինծառայողը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն կատարել իր պարտականությունները և չհրաժարվել դրանց կատարումից՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

11. Զինծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք վարկաբեկում, նսեմացնում կամ վնասում են զինվորական ծառայությունը, Սահմանապահ զորքերի հեղինակությունը և Զինծառայողների բարի համբավը:

12. Զինծառայողը պարտավոր է բացառել խտրական վերաբերմունքի դրսևորում որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի նկատմամբ՝ կապված նրա սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հետ:

13. Զինծառայողը պարտավոր է իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, գործել այնպես, որ ծառայակիցների մոտ նման կասկած չհարուցվի կամ ողջամտորեն նման տպավորություն չստեղծվի:

14. Զինծառայողը պարտավոր է մասնագիտական աջակցության, կարողությունների զարգացման, առաջխաղացման, պարգևատրման և ծառայողական գործունեությունից բխող այլ հարաբերություններում ցուցաբերել ոչ կանխակալ, արդարամիտ վերաբերմունք:

15. Զինծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն չարտահայտել քաղաքական տեսակետներ, զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց:

16. Զինծառայողը պարտավոր է Սահմանապահ զորքերի գործունեության և այլ ոլորտներում առկա հանգամանքների վերաբերյալ քննադատական մտահոգություններ արտահայտելիս լինել հարգալից և զուսպ:

17. Զինծառայողը ծառայողական պարտականությունները կատարելիս պետք է իր վարքագիծը հարմարեցնի իրավիճակին և իր գործառույթների իրականացմանն առնչվող անձանց բնութագրերին, մասնավորապես՝ նրանց տարիքին, սեռին, ազգությանը և կրոնին: Զինծառայողը պետք է նաև հաշվի առնի այդ անձանց օրինական կարիքները և հարգանք ցուցաբերի նրանց խորհրդանիշների, լեզվի, սովորույթների և ավանդույթների նկատմամբ:

18. Զինծառայողը չպետք է ընդունի, հանդուրժի կամ անտեսի այլ աշխատակիցների այնպիսի վարքագիծը, որը խախտում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կամ մասնագիտական էթիկայի սկզբունքները:

19. Զինծառայողը պարտավոր է իր ազնիվ վարքագծով օրինակ ծառայել այլ Զինծառայողներին և հանրությանը:

20. Զինծառայողը պետք է մշտապես ցուցաբերի բարեկիրթ վարքագիծ և ունենա ծառայության պայմաններին համապատասխանող կոկիկ արտաքին տեսք:

21. Զինծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ընկալվել որպես հակաօրինական գործունեություն (գործողություն կամ անգործություն) կամ դրա խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն կամ անհարգալից վերաբերմունք օրինավոր վարքագծի նկատմամբ:

22. Զինծառայողն իրավունք չունի հանրային շահը ստորադասել իր կամ անհատների կամ խմբերի մասնավոր շահերին, գործել ի վնաս պետության, կախվածության մեջ դնել պարտականությունների կատարումն անձնական շահագրգռվածությունից:

23. Զինծառայողը չպետք է թույլ տա այնպիսի իրավիճակներ, երբ անձնական հարցերը խոչընդոտում են ծառայողական պարտականությունների կատարմանը՝ առաջացնելով կողմնակալության կամ եսասիրության կասկածներ:

24. Զինծառայողը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադասի կամ անմիջական ղեկավարի հետ:

25. Զինծառայողը պետք է զգուշորեն վարվի իրեն վստահված գույքի հետ, կառավարի այն խելամտորեն և չօգտագործի այն ծառայողական պարտականությունների կատարման հետ կապ չունեցող նպատակներով:

26. Զինծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ պարտականությունների կատարման ընթացքում ստացված տեղեկատվությունն անձնական օգուտ կամ առավելություն ստանալու նպատակով օգտագործելուց:

27. Զինծառայողը պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելիս պարտավոր է կատարել պետական գաղտնիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

28. Զինծառայողը պարտավոր է մասնավոր զրույցների, ինչպես նաև պարտականությունների կատարման հետ չկապված այլ իրավիճակներում չբացահայտել պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը, չտարածել չճշտված կամ ոչ հավաստի տեղեկատվություն, իսկ որևէ հարցում հստակ չկողմնորոշվելու դեպքում այդ մասին տեղեկացնել իր անմիջական ղեկավարին կամ վերադասին, կատարել վերջիններիս կողմից կայացված՝ իրավիճակի լուծմանն ուղղված որոշումը:

29. Զինծառայողը պարտավոր է իր պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում չօգտագործել ծառայության բերումով իրեն հայտնի դարձած այնպիսի տեղեկություններ, որոնք, թեև ենթակա են հրապարակման, սակայն դեռևս չեն հրապարակվել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից:

30. Զինծառայողը պարտավոր է պահպանել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

31. Զինծառայողը պարտավոր է արդյունավետորեն և խնայողաբար օգտագործել հանրային ռեսուրսները, այդ թվում՝ ծառայողական գույքը, ինչպես նաև չօգտագործել դրանք սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՑ ԲԽՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

32. Զինծառայողը պետք է խուսափի կոռուպցիայի ցանկացած ձևից և պայքարի դրա բոլոր դրսևորումների դեմ:

33. Զինծառայողը պարտավոր է խուսափել ցանկացած հովանավորչությունից, ձեռնպահ մնալ մասնավոր նպատակների համար որևէ ազդեցություն ձեռք բերելուն ուղղված գործողություններ կատարելուց, այդ թվում՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով կամ այլ անձի կամ կազմակերպությանը որևէ արտոնություն տրամադրելով կամ այդպիսիք տրամադրելու խոստումներ տալով:

34. Զինծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ հանրային ծառայության համակարգում պաշտոն զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված որևէ մեկի նկատմամբ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց, ինչպիսի վերաբերմունք ողջամտորեն չէր դրսևորվի պաշտոն չզբաղեցնող անձի նկատմամբ:

35. Զինծառայողը չպետք է իր պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունի կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնի՝ բացառությամբ օրենքով թույլատրելի համարվող նվերների:

36. Զինծառայողը պարտավոր է իր պարտականությունների կատարման ընթացքում խուսափել այնպիսի գործողություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում, կամ որոնց առկայության պայմաններում Զինծառայողը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պարտականությունները:

37. Զինծառայողն իր պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր է խուսափել այնպիսի գործողության կատարումից կամ որոշման կայացումից, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես ուղղակի կամ անուղղակի անձնական շահով կամ իր հետ փոխկապակցված անձի շահով առաջնորդվել:

38. Զինծառայողը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ կամ գործողություններ իր անձնական շահերի և իր պաշտոնից ու կարգավիճակից բխող շահերի միջև հնարավոր բախումը կանխելու համար:

39. Զինծառայողը պարտավոր է շահերի բախման ցանկացած դեպքում այդ մասին տեղեկացնել իր անմիջական ղեկավարին կամ վերադասին, կատարել վերջիններիս կողմից կայացված՝ իրավիճակի լուծմանն ուղղված որոշումը:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

40. Զինծառայողն ի պաշտոնե հանդես գալիս այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս պարտավոր է ցանկացած իրավիճակում ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն:

41. Զինծառայողները պետք է իրենց մասնագիտական հարաբերությունները կառուցեն համատեղ պատասխանատվության, համերաշխության, համագործակցության, հավասարության, հանդուրժողականության, ընկերակցության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության, ինչպես նաև փորձի և գիտելիքների փոխանակման հիման վրա:

42. Զինծառայողներին արգելվում է.

1) նվաստացնել կամ վիրավորել այլ անձանց,

2) հրապարակայնորեն քննարկել գործընկերների բնավորությունն ու առանձնահատկությունները,

3) զրպարտել գործընկերոջ աշխատանքը կամ ունեցվածքը,

4) հրահրել անհամաձայնություններ՝ օգտագործելով պաշտոնական կամ հոգեբանական առավելությունները,

5) ցուցաբերել բացասական հույզեր,

6) ստեղծել վախեցնող, թշնամական, նվաստացնող կամ վիրավորական միջավայր:

43. Գործընկերների հետ հարաբերություններում զինծառայողները պարտավոր են.

1) պահպանել զինվորական համակեցության կանոնները,

2) ցուցաբերել հարգանք և բարեկրթություն՝ թույլ չտալով այնպիսի վարքագիծ, որը վնասում է անհատի արժանապատվությունն ու իրավունքները կամ ստեղծում է այնպիսի իրավիճակ, որը

խոչընդոտում է պարտականությունների կատարմանը, խաթարում ստորաբաժանումում առկա գործընկերային մթնոլորտը:

3) վարվել հարգալից՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահպանելու իր համոզմունքները և ազատորեն արտահայտելու դրանք,

4) ձգտել ապահովել փոխադարձ վստահության գերիշխում թիմում, խուսափել ոտնձգությունների և խտրականության ցանկացած դրսևորումից, մոբինգից (հոգեբանական բռնություն), գործընկերոջ հեղինակության արատավորումից, աշխատանքի նսեմացումից, բամբասանքից և զրպարտությունից,

5) չխրախուսել կամ չհանդուրժել թիմի ներսում առաջացող կոնֆլիկտային իրավիճակները և լուծել առաջացող ցանկացած անհամաձայնություն բարի կամքով՝ դրանք քննարկելով միմյանց միջև, իսկ Զինծառայողների միջև զինվորական կանոնադրություններով սահմանված փոխհարաբերությունների խախտման դեպքում՝ զեկուցելով անմիջական պետին:

6) տեղեկացնել գործընկերներին նրանց կողմից թույլ տրված կամ թույլ տրվող ցանկացած սխալի մասին, ճիշտ ներկայացնել իրենց մեկնաբանությունները և, անհրաժեշտության դեպքում, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն:

44. Սահմանային վերահսկողություն իրականացնելիս Զինծառայողները պարտավոր են.

1) ծանոթ լինել այն հիմնական արտահայտություններին (բառամթերքին), որոնք առավել հաճախ է կիրառվում պետական սահմանը հատող անձանց մայրենի կամ հաղորդակցման լեզուներում,

2) սահմանային ստուգումների բնույթի և նպատակի մասին տեղեկացնելիս պետական սահմանը հատող անձանց հետ հաղորդակցվել պարզ և հասկանալի, նրանց հարցերին պատասխանել ըստ էության, ճշգրիտ և քաղաքավարի ձևով,

3) կարիք ունեցողներին ցուցաբերել առաջին բուժօգնություն և անհապաղ ուղղորդել համապատասխան բուժօգնության ծառայություններ,

4) լինել զգայուն անձի տարիքային, սեռային, կրոնական և մշակութային առանձնահատկություններին, հարմարեցրել իրենց վարքագիծը հատուկ կարիքներ ունեցող կամ խոցելի վիճակում հայտնված անձանց հետ շփումներում (օրինակ՝ երեխաներ, մարդու թրաֆիքինգի կամ այլ բռնությունների զոհեր, հղի կանայք, առողջական խնդիրներ ունեցողներ, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն),

5) արգելանքի վերցրված անձանց իրենց հասկանալի լեզվով տեղեկացրել իրենց իրավունքների և կիրառվող ընթացակարգի մասին,

6) անձնական կյանքի անձեռնմխելիության սահմանափակումը (օրինակ՝ անձնական իրերի ստուգման ժամանակ) իրականացնել միայն այն չափով, որքան անհրաժեշտ է սահմանային վերահսկողության նպատակների իրականացման համար,

7) մարդկանց, ովքեր ցանկանում են բողոքել, տեղեկացրել բողոքարկման ընթացակարգերը, իսկ ստացած բողոքները գրանցել սահմանված կարգով,

8) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից ապաստանի հայց ներկայացնելու ցանկության դեպքում վերջինիս հասկանալի լեզվով տրամադրել տեղեկատվություն ապաստանի հայց ներկայացնելու ընթացակարգի վերաբերյալ,

9) անհապաղ քայլեր ձեռնարկել ենթադրյալ թրաֆիքինգի ենթարկված անձանց պաշտպանելու և նրանց թրաֆիքինգի ենթարկողներից առանձնացնելու համար:

45. Զինծառայողը, պարտականությունների կատարման ընթացքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չներկայացնել, ինչպես նաև չգործադրել հոգեբանական բռնություն:

46. Զինծառայողը պարտավոր է գործադրել բոլոր ողջամիտ ջանքերը՝ իրավիճակը նախ ոչ բռնի միջոցներով լուծելու համար, ներառյալ համոզելը, բանակցությունները կամ միջնորդությունը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում ֆիզիկական ուժ կամ զենք կիրառելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ֆիզիկական ուժի և զենքի կիրառման համաչափության կանոնները՝ վնասվածքի կամ վնասի ռիսկը նվազագույնի հասցնելու համար:

47. Զինծառայողը պարտավոր է զերծ մնալ ցանկացած տեսակի, այդ թվում՝ սեռական ոտնձգության դրսևորումներից կամ նման ոտնձգության տպավորություն ստեղծելուց:

48. Զինծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ողջամտորեն ընկալվել որպես անհարգալից վերաբերմունք քաղաքացիների, ղեկավարների, ենթակաների կամ այլ ծառայակիցների նկատմամբ:

5. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

49. Զինծառայողը պարտավոր է ծառայողական շենքերի միջանցքներում և ընդհանուր օգտագործման այլ վայրերում անձանց հետ շփվելիս, ինչպես նաև բջջային հեռախոսով հաղորդակցվելիս դրսևորել զսպվածություն, հետևել բարեվարքության և քաղաքավարության կանոններին, այդ թվում՝ չաղմկել, չառաջացնել կուտակումներ, բացառել փողոցային խոսելաոճով զրուցելը և ողջագուրվելով (համբուրվելով) բարևելը:

50. Զինծառայողը պարտավոր է աշխատանքի վայր և իր պարտականությունների իրականացման հետ կապված այլ վայրեր ներկայանալ համազգեստով, իսկ համապատասխան թույլտվության դեպքում՝ նաև այլ հագուստով, լինել պատշաճ տեսքով, այդ թվում՝ պահպանել արտաքին տեսքին ներկայացվող հետևյալ պահանջները.

1) պահպանել զինվորական համազգեստ կրելու կանոնները,

2) չկրել վառ գունավորում ունեցող, խայտաբղետ, փայլփլուն, աչքի ընկնող զարդանախշերով, խորը բացվածքով կամ պատառոտված հագուստ, մարզահագուստ, երեկոյան զգեստ, հողաթափեր կամ համանման այլ կոշիկներ,

3) չկրել ներքնազգեստը ցուցադրող կամ թափանցող հագուստ,

4) չկրել մեջքի, որովայնի, կոնքերի, ազդրերի հատվածները կամ ուսերն ամբողջությամբ մերկացնող կամ թափանցող հագուստ,

5) չկրել կոշիկներն առանց գուլպա, սրունքները ցուցադրող, մարմինն ընդգծող կիպ տաբատ, կիսատաբատ, կարճաճիտ գուլպաներ (վերաբերում է արական սեռի Զինծառայողներին),

6) չկրել ծաղկավոր, ցանցավոր, զարդանախշերով զուգագուլպաներ,

7) մարմնի տեսանելի մասերում չունենալ և չանել դաջվածքներ, ինչպես նաև փիրսինգներ (բացառությամբ իգական սեռի Զինծառայողների՝ ականջօղ կրելու համար ականջաբլթակի հատվածում կատարած մեկ դակումի),

8) խուսափել դեմքի հատվածում արտահայտիչ, աչքին զարնվող կոսմետիկ միջամտություններից (սիլիկոնե շրթունքներ, արհեստական թարթիչներ և այլն):

51. Զինծառայողին արգելվում է օգտագործել թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման դեպքերի), ինչպես նաև ծառայության ընթացքում գործածել ոգելից խմիչքներ կամ դրանց ազդեցության տակ գտնվել աշխատավայրում կամ պարտականությունների կատարման այլ վայրում:

52. Զինծառայողին արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին:

53. Զինծառայողին արգելվում է աշխատանքի վայրում ծխել՝ բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների, ինչպես նաև խախտել հրդեհային անվտանգության և սանիտարական նորմերն ու կանոնները:

54. Զինծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից, պետական մարմինների՝ օրենսդրությամբ սահմանված խորհրդանիշներից ու տարբերանշաններից, լիազոր մարմինների կողմից ընդունված արարողակարգային խորհրդանիշներից և տարբերանշաններից, օտարերկրյա պատվիրակությունների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ պետությունների պետական խորհրդանիշներից, միջազգային կառույցների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ կառույցների խորհրդանիշներից ու տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանիշի կամ տարբերանշանի ցուցադրումից:

55. Զինծառայողը պարտավոր է սոցիալական ցանցերում չկատարել որևէ գրառում կամ մեկնաբանություն, չհավանել կամ չտարածել գրառումներ, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել Ազգային անվտանգության մարմինների և Սահմանապահ զորքերի հեղինակությունը:

56. Զինծառայողը պարտավոր է սոցիալական ցանցերում չմեկնաբանել, չքննադատել, չքննարկել Ազգային անվտանգության մարմինների և Սահմանապահ զորքերի գործառույթները, որոշումները, գործունեությանն առնչվող խնդիրները և իրավական հարցերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է ի պաշտոնե իրականացվող գործառույթներից, ինչպես նաև դրանց վերաբերյալ չտարածել ոչ պաշտոնական լուրեր:

57. Զինծառայողը պարտավոր է խուսափել սոցիալական ցանցերում անձնական այնպիսի լուսանկարներ և տեսագրություններ հրապարակելուց, որոնք կարող են Ազգային անվտանգության մարմիններին և Սահմանապահ զորքերին վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ:

58. Իրավական ակտերով կամ մասնագիտական էթիկայի սկզբունքներով չկարգավորված դեպքերում Զինծառայողները պարտավոր են պահպանել հասարակական համակեցության

սկզբունքները և անբասիր կերպով վարվել այնպես, որ իրենց գործողությունները նպաստեն Սահմանապահ զորքերի նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը և չվնասեն նրա կամ Զինծառայողների բարի համբավին:

6. ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

59. Ղեկավար պաշտոն զբաղեցնող Զինծառայողը պարտավոր է անբասիր վարքագծի օրինակ ծառայել ենթակա զինծառայողների համար, չպետք է չարաշահի իր պաշտոնեական դիրքը կամ լիազորությունները ենթակա զինծառայողների նկատմամբ:

60. Ղեկավար պաշտոն զբաղեցնող Զինծառայողը պարտավոր է հստակորեն տիրապետել Սահմանապահ զորքերի խնդիրներին և նպատակներին, դրանց մասին պատշաճ տեղեկացնել իրեն ենթակա անձնակազմին:

61. Ղեկավար պաշտոն զբաղեցնող Զինծառայողը պարտավոր է չտալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին հակասող, ինչպես նաև իր կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս հանձնարարականներ:

62. Ղեկավար պաշտոն զբաղեցնող Զինծառայողը պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ քայլերն իրեն ենթակա անձնակազմի շրջանում Հայաստանի Հանրապետության օրենքների և Վարքագծի կանոնների իրազեկվածությունն ապահովելու ուղղությամբ, հետևողական լինի դրանց պահպանմանը:

63. Ղեկավար պաշտոն զբաղեցնող Զինծառայողը պետք է ապահովի համապատասխան պայմաններ ենթակա զինծառայողների առաջադրանքների կատարման և մասնագիտական զարգացման համար, բարենպաստ ծառայողական և աշխատանքային մթնոլորտ, լավ միջանձնային հարաբերություններ, ինչպես նաև ոգեշնչի և մոտիվացնի ենթակա Զինծառայողներին:

64. Ղեկավար պաշտոն զբաղեցնող Զինծառայողը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ իր ենթակաների շրջանում կոնֆլիկտային իրավիճակները հաղթահարելու համար:

65. Ղեկավար պաշտոն զբաղեցնող Զինծառայողը ենթակա Զինծառայողներին գնահատելիս պետք է առաջնորդվի հստակ սահմանված և օբյեկտիվ չափանիշներով: